911 Արտակարգ թերթ

N 44 (692)
24-30.11 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Աշխատանքային այց

Փարիզ

Նոյեմբերի 21-24-ը Ֆրանսիայի ՆԳ նախարարության հրավերով ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն աշխատանքային այցով Փարիզում էր: Ֆրանսիայի ՆԳ նախարար Ժերար Կոլոնի հետ քննարկվել են երկու երկրների միջև արտակարգ իրավիճակներում համագործակցության ընդլայնման և խորացման նոր հնարավորությունները:

Տես՝ էջ 2

Միջազգային կապեր
ԱՐՑԱԽԻ ՕՐԵՐ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Այս օրերին առաջին անգամ Եվրոպայում անցկացվում են «Արցախի օրեր»:

Հանդիսավոր բացմանը ներկա է եղել Արցախի նախագահ Բակո Սահակյանը:

«Համոզված ենք,- ասել է նա,- որ ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները կիրականացվեն պատշաճ մակարդակով, որովհետև ունենք հայրենասեր հայրենակիցներ և հավատարիմ բարեկամներ, ովքեր իրենց ներգրավմամբ կստարեն բոլոր նախաձեռնությունների կյանքի կոչմանը»:

«Սպասելիքները շատ են,- ըստ «Արցախպրեսի»՝ հանդիսավոր բացմանն իր խոսքում ասել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը և հավելել,- *Ֆրանսիայում «Արցախի օրերի» կազմակերպումը կարևոր ներդրում կունենա Ֆրանսիայի հետ Արցախի փոխգործակցության ընդլայնման գործում՝ ֆրանսիական ու եվրոպական հանրությանը ներկայացնելով մեր երկիրը, նրա պատմությունը, մշակույթը, տնտեսությունը և այլ բնագավառներ»:* ■

Բրյուսել
ՄԵԾ ՔԱՅԼ ԱՌԱՋ

Նոյեմբերի 24-ին Բրյուսելում կայանալիք Արևելյան գործընկերության 5-րդ գագաթնաժողովի ընթացքում Հայաստանի և Եվրամիության միջև ստորագրվելու է շրջանակային համաձայնագիր: «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» նախաստորագրվել է մարտի 21-ին: Համաձայնագրի շուրջ բանակցությունները մեկնարկեցին 2015-ի դեկտեմբերից, այն բանից հետո, երբ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Եվրամիության 28 անդամ պետությունները Լյուքսեմբուրգում մանդատ տրամադրեցին Հայաստանի և Եվրամիության միջև նոր համաձայնագիրի ստորագրելու շուրջ բանակցություններ սկսելու համար: Եվրամիությունը վերանայեց հարևանության քաղաքականության, այդ թվում՝ Արևելյան գործընկերության երկրների հետ հարաբերությունների իր ռազմավարությունը՝ որդեգրելով առավել տարբերակված մոտեցման սկզբունքը: Համաձայնագրի քաղաքական մասը հաջողվեց բավական արագ համաձայնեցնել՝ ելնելով նրանց, որ այն հիմնվում է և գրեթե կրկնում է բանակցված, համաձայնեցված 2013 թվականի Ասոցացման համաձայնագիրը: Առավել երկար տևեց համաձայնագրի մյուս, ոչ պակաս կարևոր՝ տնտեսական մասի համաձայնեցումը, որը կոչված էր ամրագրել Հայաստան-Եվրամիություն տնտեսական հարաբերությունների հնարավորինս բարձր մակարդակը՝ արդեն հաշվի առնելով մեր երկրի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ): Նշենք, որ Արևելյան գործընկերության երկրներից Հայաստանն առաջինն է, որին հաջողվեց Եվրամիության հետ արդյունավետ երկխոսության միջոցով հասնել Ասոցացման համաձայնագրերի նկատմամբ այլընտրանքային ձևաչափով հարաբերությունների զարգացմանը:

Այս համաձայնագիրը փոխարինելու է ներկայումս գործող Հայաստան-Եվրամիություն «Գործընկերության և գործակցության համաձայնագրին»: Այս համաձայնագրի ստորագրմամբ Հայաստանն ամրագրում է իր հավատարմությունը եվրոպական արժեհամակարգին, երկրում բարեփոխումներն առաջ մղելու իր մտադրությանը:

Այս համաձայնագիրն ընդլայնելու է Եվրամիության հետ համագործակցությունը՝ բիզնես միջավայրի ընդլայնման, ներդրումների ներգրավման, եվրոպական կառավարման մշակույթի ներդրման և այլ ուղղություններով:

1590 էջանոց այս համաձայնագրի ստորագրմամբ, վարչապետ Կարեն Կարապետյանի խոսքով՝ «դեպի առաջ մեծ քայլ կկատարենք», որից հետո մեր ձեռքում կլինի նախատեսված 1000 ու մի հնարավորությունների օգտագործումը:

Առաջին անգամն է, որ Եվրամիությունը համաձայնագիր է կնքում մի պետության հետ, որը միաժամանակ ԵԱՏՄ անդամ է: Իսկ դա մեծ հնարավորություն է եվրոպական երկրների համար՝ Հայաստանում բիզնես միջավայրի ընդլայնմամբ ԵԱՏՄ երկրների հետ առևտրատնտեսական նոր հարաբերություններ ձևավորելու համար:

Ակնկալվում է, որ համաձայնագրի ստորագրումը բրյուսելյան գագաթնաժողովի կարևորագույն իրադարձություններից մեկն է լինելու:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, որ արդեն ժամանել է Բրյուսել, այս տարվա սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ի բարձր ամբիոնից հայտարարեց, որ Հայաստանը ստորագրելու է համաձայնագիրը:

Սպասենք Հայաստանի դեպի առաջ մեծ քայլին:

Հայաստանի և Եվրոպական միության միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման հատվածի մասին՝ մեր թերթի առաջիկա համարներից մեկում: ■

Գագիկ ԵՂՅԱՆ

Կարևոր

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է ՀՀ ԱԻՆ ՓՈՐՁՈՎ

էջ 2

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

էջ 3

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՁՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

էջ 4

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

էջ 5

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Ճանաչողական այց

Նոյեմբերի 20-ին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանն ընդունել է ՄԱԿ-ի գրասենյակի անվտանգության գծով խորհրդատու Ինոք Փեննի Լային: Վրեժ Գաբրիելյանը ներկայացրել է ՀՀ ԱԻՆ համակարգի կառուցվածքը, ընթացիկ աշխատանքների հիմնական ուղղությունները: Քննարկվել են փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպման և հնարավոր համագործակցության հետ կապված հարցեր:

ԻՆ ԱՍԵՆ
2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ՓԱՐԻԶ

Սկիզբը՝ էջ 1

Դավիթ Տոնոյանը հանդիպումներ է ունեցել նաև Ֆրանսիայի ՆԳՆ Քաղաքացիական անվտանգության և ճգնաժամերի կառավարման կենտրոնի գլխավոր տնօրեն Ժակ Վիտկովսկու և «Մետեո-Ֆրանս» պետական կազմակերպության տնօրեն Ժան Մարկ Լակավի հետ:

Քննարկվել են երկու երկրների միջև արտակարգ իրավիճակների բնագավառում համագործակցության ընդլայնման և խորացման նոր հնարավորությունները, մասնավորապես՝ 2014-ի մայիսի 15-ին ՀՀ արտակարգ իրավիճակների և Ֆրանսիայի ներքին գործերի նախարարությունների միջև ստորագրված «Մտադրությունների նամակում» սահմանված ոլորտներում համագործակցության և աշխատանքների ակտիվացումը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցել լեռնային պայմաններում փրկարարական աշխատանքների, անտառապատ տարածքներում հրդեհաշիջման աշխատանքների իրականացման գործընթացում անձնակազմի հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստման և փորձի փոխանակման շրջանակներում: Կողմերը պատրաստակամություն են հայտնել նաև իրականացնել փորձի փոխանակում կամավորական փրկարարական շարժման հետագա զարգացման ուղղությամբ, ինչպես նաև ամրապնդել համագործակցային կապերը ՀՀ ԱԻՆ հոգեբանական աջակցության բաժնի և Աղետների բժշկության կենտրոնի հետ՝ մասնագիտական վերապատրաստումների, կոնֆերանսների, տեսակոնֆերանսների, սեմինարների, գիտաժողովների և հետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման, փոխայցելությունների միջոցով:

«Մետեո-Ֆրանս» պետական կազմակերպության տնօրեն Ժան Մարկ Լակավի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են «Մետեո-Ֆրանս»-ի առաջադեմ փորձի կիրառության հնարավորությունները ՀՀ ԱԻՆ «Հրդրոմետ» ծառայության արդիականացման գործընթացում, ինչպես նաև՝ ծառայության անձնակազմի մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները:

ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն այցելել է նաև Ֆրանսիայի ներքին գործերի նախարարության կազմակերպած Milipol Paris 20-րդ ցուցահանդեսը, որն առաջին համաշխարհային ցուցահանդես-սրահն է և նվիրված է անվտանգությանն ու նորարարություններին: Ցուցահանդեսին առաջարկվում են նորագույն տեխնոլոգիաներ և ծառայություններ բազմաթիվ ոլորտներում. ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքար, սահմանների վերահսկողություն, կարևորագույն ենթակառուցվածքների պաշտպանություն, քաղաքային անվտանգություն, ռիսկերի կառավարման վերլուծություն և կիբերանվտանգություն և այլն: ■

Աղբյուր՝ mes.am

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է ՀՀ ԱԻՆ ՓՈՐՁՈՎ

Այս օրերին Հայաստանում է գտնվում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ԱԻ կառավարման պատասխանատու կառույցների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված են մասնագետներ ՆԳՆ բնակչության պաշտպանության և աղետների դեպքում աջակցության դաշնային գրասենյակից, Տեխնիկական համագործակցության գործակալությունից (THW), հրշեջ ջոկատների ասոցիացիայից և Գերմանական կարմիր խաչի կազմակերպությունից:

Նոյեմբերի 20-ին գերմանական պատվիրակությունը հանդիպել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանին:

Այցի նպատակն է ուսումնասիրել Հայաստանում ԱԻ կառավարման համակարգի փորձը, կարողությունները և դիտարկել համագործակցության խորացման հնարավորությունները:

Ողջույնի խոսքում Վրեժ Գաբրիելյանն ընդգծեց, որ աղետների արձագանքման ոլորտում Գերմանիայի հետ համագործակցությունը սկիզբ է առել 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո, երբ Գերմանական կարմիր խաչի աջակցությամբ ստեղծվեց «Սպիտակ» կամավորական փրկարարական ջոկատը:

«Մեծ է նաև Գերմանիայի դերը մեր երկրում ԱԻ կառավարման համակարգի զարգացման գործում, քանի որ առաջին պրոֆեսիոնալ փրկարարական մեքենաները մեզ տրամադրվել են Գերմանիայի կողմից՝ 1996 թվականին, որոնք դարձան փրկարար ծառայության տեխնիկական վերազինման հիմքը»,- ասաց ՓՇ տնօրենի տեղակալը:

Պատվիրակության ղեկավար, THW-ի երկկողմ համագործակցության պատասխանատու Թոմաս Հյունիքն իր խոսքում նշեց, որ իրենք հետաքրքրված են ԱԻ կառավարման միասնական համակարգի ուսումնասիրությամբ և պատրաստ սերտ ու արդյունավետ փոխգործակցության՝ խորացնելով արդեն առկա կապերը:

Նախատեսվում են հանդիպումներ ՀՀ ԱԻՆ տարբեր ստորաբաժանումների հետ, ճանաչողական այցելություններ մարզային հրշեջ-փրկարարական ջոկատներ և Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոն:

Աղբյուր՝ mes.am

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ

Նոյեմբերի 23-ին Երևանի ժամանակով 22:00-ից մինչև նոյեմբերի 24-ի ժամը 10:00-ն անցկացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի տարեկան, ավանդական՝ արդեն 15-րդ լոսանջելեսյան հեռուստամարաթոնը:

«Բերքառատ Արցախ» խորագրով դրամահավաքից ստացված միջոցները կուղղվեն Արցախում խորքային հորերի հորատմանն ու ոռոգման նոր ցանցի կառուցմանը և արևային էներգիայի կայանների կառուցմանը:

Հեռուստամարաթոնին ընդառաջ արդեն գումարներ են հավաքվել:

Հայաստանի Լոռու մարզի բնակիչները հավաքել են ավելի քան 12 միլիոն դրամ:

Բրազիլահայերը հավաքել են 48 000 դոլար, կանադահայերը՝ 530 հազար դոլար, Եվրոպայի հայերը՝ 1,23 միլիոն եվրո:

ՄԱՐԶԵՐԻ ՔՊ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

«911.Արտակարգ թերթի» այս տարվա սեպտեմբերի 22-ի 35-րդ համարում տեղեկացրել ենք, որ, ՀՀ կառավարության «ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման» կարգի համաձայն, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության աշխատանքային խումբը մինչև 2019 թվականի ավարտը քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում է իրականացնելու մարզային և համայնքային 35 կազմակերպություններում: Նոյեմբերի 13-17 հատվածում գնահատվել է Շիրակի մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակը: Սա վերջին մարզն էր, որտեղ նման գնահատում արվեց: Այսպիսով՝ Հայաստանի բոլոր 10 մարզի ՔՊ վիճակն էլ գնահատված է՝ ներառելով բոլոր համայնքները:

Քաղաքացիական պաշտպանության վիճակի գնահատման աշխատանքներն այնպես են կազմակերպված, որ ուշադրությունից դուրս չի մնում ոչ մի կազմակերպություն: Օրինակ, Արմավիրի մարզի համալիր գնահատման մեջ ներառվել է Մեծամորի ատոմակայանը, Շիրակի մարզում՝ «Գյումրի գարեջուր» ընկերությունը և այլն:

Գնահատումը սովորաբար տևում է 4 օր, հինգերորդ օրն անցկացվում է շտաբային ուսումնավարժություն՝ ստուգելու համար

տեղի քաղպաշտպանության կազմավորումների պատրաստվածության աստիճանը: Վերջում քաղպաշտպանության վիճակի համալիր գնահատման աշխատանքային խումբը ակտ է կազմում, որում, բացի վիճակը ներկայացնելուց, նաև առկա թերությունները և բացերը վերացնելու՝ քաղպաշտպանության համակարգը բարելավելու հստակ առաջարկներ են լինում. արդիականացնել ազդարարման համակարգը, ձեռք բերել այս կամ այն գույքը և այլն: Ակտը հաստատում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը, իսկ գնահատված կազմակերպությունը ակտի հիման վրա կազմում է թերությունների վերացման ժամանակացույց: Չի բացառվում, որ քաղպաշտպանության վիճակի համալիր գնահատման աշխատանքային խումբը ևս մեկ անգամ անցնի արդեն գնահատված գերատեսչություններով ու կազմակերպություններով՝ տեսնելու, թե ով ուր է հասել թերությունների վերացման հարցում: ■

911
Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Տարբեր արտակարգ իրավիճակներում

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի» գույքն արդեն քանիցս օգտագործվել է տարբեր արտակարգ իրավիճակներում: Օրինակ, այս ամռանը անտառային հրդեհների ժամանակ բարձրլեռնային և դժվար հասանելի վայրերում տեղադրվել են կենտրոնի տրամադրության տակ եղած 1500 լ տարողությամբ ավազաններն ու ջուր մատակարարել հրշեջներին:

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի» գույքն ամբողջանում է

Նոյեմբերի 16-ին անհրաժեշտ հատուկ սարքերի և տեխնիկայի հերթական խմբաքանակը ստացավ Հայաստանի Կոտայքի մարզի Գետարգել համայնքում գտնվող «Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը». երկուական Солар 555 МК և Корвет 500 - FISH մոտորանավակ, 5 UAZ Patriot մեքենա, երկու Газель մեքենա՝ մեկը հագեցած ջրասուզակներին անհրաժեշտ հատուկ գույքով, մյուսը՝ սակրավորների, լուսավորության աշտարակներ, գեներատորներ, պոմպեր, OMEGA շնչառական սարքեր, որոնողական սարքեր, 10 000 ծածկոց, 5000 ծալովի մահճակալ: Մինչև տարեվերջ կենտրոնը դեռ էլի գույք կստանա:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը» բացվել է 2016 թվականի մարտի 18-ին՝ ի կատարումն հայ-ռուսական միջկառավարական «Արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի: Նպատակն է՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների վերացմանն ուղղված հնարավորությունների և մեխանիզմների զարգացումն ու հզորացումը, տարածաշրջանային համագործակցության զարգացումը, բնակչության պաշտպանվածության և տարածաշրջանում տեղի ունեցած արտակարգ դեպքերին օպերատիվ արձագանքման մակարդակի բարձրացումը:

Հայկական կողմը նորոգել-բարեկարգել է 17,5 հա մակերեսով տարածք, շենք, շինություններ: Ռուսական կողմը պարտավորվել է ապահովել կենտրոնի տեխնիկական համալրումը՝ 2016-2018 թթ. համար ավելի քան 20 միլիոն դոլարի գույք. ռոբոտատեխնիկական համակարգեր (հրդեհաշիջման և սակրավորական), հրշեջ, լեռնափրկարարական, վթարափրկարարական, ջրափրկարարական մեքենաներ և ավտոսանդուղքներ, վթարափրկարարական գործիքներ, լեռնափրկարարական լրակազմ, մոտորանավակներ, ջրափրկարարական համազգեստներ, որոնման սարքավորումներ, ինժեներական և ավտոմոբիլային տեխնիկա, ամենագնացներ, արագ արձագանքման փրկարարական տեխնիկա, անօդաչու թռչող սարքեր, իրազեկման և ազդարարման շարժական միջոցներ և այլն:

Կենտրոնի ռուսաստանցի համատնօրեն Յուրի Պոլիշչուկի խոսքով, 2016-ին հիմնական փաստաթղթային հարցեր են կարգավորվել. կենտրոնին անհրաժեշտ գույքի տեսակները, քանակը, դրանց Հայաստան ներկրման ժամկետները և այլն:

Այս տարվա մայիսին Ռուսաստանը տրամադրել է գույքի առաջին խմբաքանակը. փրկարարական գործիքներ, տարբեր հզորությամբ հոսանքի գեներատորներ, մոտոպոմպեր և այլն: Դրանից հետո կենտրոնը մշտապես համալրվել է գույքով. մոտոպոմպեր, գեներատորներ, վթարափրկարարական գործիքներ, մոտորանավակներ, լուսային աշտարակներ, ամենագնացներ (կվադրոցիկլ): Վերջին համալրումը նոյեմբերի 16-ին էր:

Ըստ Յուրի Պոլիշչուկի՝ մինչև տարեվերջ կենտրոնում պատրաստ ու հատուկ տեխնիկայով և գույքով կահավորված կլինի վերապատրաստման երկու լսարան. ճարտարագիտական ապահովման և փրկարարական: Քաղաքացիական պաշտպանության, ճգնաժամային կառավարման և արտակարգ իրավիճակներին արձագանքման ոլորտի մասնագետները կվերապատրաստվեն թե այս կենտրոնում, թե Ռուսաստանի և Հայաստանի մասնագիտական այլ կառույցներում: Այս օրերին քաղաքացիական պաշտպանության հայաստանցի 10 մասնագետ Ռուսաստանում մասնակցում է որակավորման բարձրացման դասընթացների: Հետագայում նման դասընթացներ կկազմակերպվեն նաև այլ մասնագետների համար: Չի բացառվում, որ կազմակերպվեն նաև փրկարարական ուժերի վերապատրաստում, փորձի փոխանակում հեռահար մեթոդով՝ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ներգրավմամբ:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնում» մեկ սենյակ կկահավորվի ու կդառնա ճգնաժամային կառավարման կենտրոն՝ Հայաստանի և Ռուսաստանի ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնների հետ մշտական կապով:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի» տնօրեն Պավել Գյոզալյանը տեղեկացրեց, որ կենտրոնը արձագանքում չի իրականացնում, օգնում է փրկարար ծառայության ուժերին և տեխնիկա տրամադրում՝ կախված արտակարգ իրավիճակի բնույթից: Օրինակ՝ 8 ամենագնաց-կվադրոցիկլից չորսը կմնա կենտրոնում, երկուսը կփոխանցվի Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնին, մեկական՝ Արարատի և Արագածոտնի մարզերին, ջրասուզակներին անհրաժեշտ հատուկ գույքով Газель մեքենան՝ Գեղարքունիքի փրկարարներին, սակրավորներին անհրաժեշտ հատուկ գույքով մեքենան՝ քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնին:

Պավել Գյոզալյանի խոսքով, «Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի» գույքն արդեն քանիցս օգտագործվել է տարբեր արտակարգ իրավիճակներում: Օրինակ, այս ամռանը անտառային հրդեհների ժամանակ բարձրլեռնային և դժվար հասանելի վայրերում տեղադրվել են կենտրոնի տրամադրության տակ եղած 1500 լ տարողությամբ ավազաններն ու ջուր մատակարարել հրշեջներին:

Բացի գույքային օժանդակությունից, կենտրոնը ՀՀ ԱԻ նախարարության հետ համատեղ Հայաստանի տարածքի ռիսկերի գնահատում է իրականացնելու: ■

Արամ ՁԱՔԱՐՅԱՆ
Լուսանկարները՝
Վահրամ ԱՎՈՅԱՆԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԹԻՄԵՐԸ

Ստեփանավանի «Լոռէ» փրկարարական կամավորական ջոկատի ուսումնական բազայում հերթական տեսական և գործնական դասընթացներն են անցկացվում: Այս անգամ պարապմունքները կազմակերպվում են Հայկական կարմիր խաչ ընկերության (ՀԿԽԸ) կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրով՝ Լոռու մարզի 8 թիրախային գյուղական համայնքներում ձևավորված համայնքային արձագանքման կամավորական թիմերի համար: «Լոռէ»-ի և Կարմիր խաչի Ստեփանավանի տարածքային կազմակերպության կամավորները դասընթացների և ուսումնական վարժանքների միջոցով համայնքների բնակիչների շրջանում փորձում են առավել ամրապնդել ու բարձրացնել բնական և մարդածին աղետների նկատմամբ պատրաստվածության մակարդակը, սովորեցնում, թե ինչպես ճիշտ, արագ և արդյունավետ արձագանքել արտակարգ իրավիճակներում: *«Ծրագրի երկրորդ փուլով նախատեսված հերթական դասընթացներն ենք իրականացնում մարզի Մեծ Պարնի, Դարպաս, Օձուն, Կուրթան, Կողես, Սարչապետ, Վահագնի, Մարգահովիտ համայնքներից ժամանած թիմերի համար: Օրակարգում ներառված են հետևյալ թեմաները. «Առաջին օգնություն», «Որոնողափրկարարական աշխատանքներ» (հետախուզում, որոնում, իրավիճակի գնահատում), «Փրկարարական աշխատանքների կազմակերպում», «Պարանային տեխնիկա» (գետանց, վայրէջք, վերելք, թեք լանջի հաղթահարում), «Աշխատանք՝ փլատակների վրա», «Ավտովթարներ» և այլն: Հաշվի առնելով այս տարվա աննախադեպ անտառային հրդեհները՝ ծրագրում ավելացրել էինք նաև խոտածածկ տարածքների և անտառային հրդեհների շիջման դեպքերում առավել արդյունավետ գործելու դասընթացները»,-* տեղեկացրեց ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային կազմակերպության, «Լոռէ» հ/կ-ի նախագահ Արմեն Առաքելյանը և ուրախությամբ փաստեց, որ համայնքներում արդեն 5 տարի գործող ու փրկարարական գույք-հանդերձանքով ապահովված աղետներին նախապատրաստման և արձագանքման կամավորական թիմերը պատրաստ են արտակարգ իրավիճակների դեպքում առաջին անհետաձգելի օգնությունը ցուցաբերել տուժած բնակիչներին՝ մինչև մասնագիտական խմբերի ժամանումը: Տարատեսակ արտակարգ իրավիճակներին արձագանքելու ունակ համայնքային կամավորական թիմերը, որոնք բաղկացած են 18 տարին լրացած իգական և արական սեռի ներկայացուցիչներից, վերջին տարիների ընթացքում արդեն գրագետ ու արդյունավետ արձագանքել են տարբեր դեպքերի:

2012-ից մեկնարկած քաղաքային և գյուղական համայնքների բնակչության խոցելիության նվազեցմանն ուղղված «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիրը ՀԿԽԸ իրականացնում է Ավստրիական կարմիր խաչի և Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրում ընդգրկված էին Երևան, Վանաձոր, Ստեփանավան քաղաքները և Լոռվա մարզի 8 գյուղական համայնք:

Ավստրիական կարմիր խաչի նախաձեռնած «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում նվազեցնել գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ՝ օգտագործելով տեղական ռեսուրսներն ու գիտելիքները:

Ըստ ծրագրի պատասխանատուների՝ տարածաշրջանը պատահական չէ ընտրված, այլ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ Հարավային Կովկասը կլիմայի փոփոխություններով, կործանարար երկրաշարժերի և բնական աղետների հակվածությամբ աշխարհում ամենախոցելի տարածաշրջաններից մեկն է: Այսուհետ, ծրագրի շնորհիվ, համայնքները համապատասխան գիտելիքներով, հմտություններով և արձագանքման անհրաժեշտ մեխանիզմներով հնարավորինս պատրաստված կլինեն սպառնացող աղետներին և ի վիճակի կլինեն սեփական ուժերով մեղմել դրանց հետևանքները: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Փոխհատուցում

Կառավարությունը Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի տարերային աղետներից՝ կարկտահարություն, ցրտահարություն և սելավներ, տուժած բնակիչներին կցուցաբերի օժանդակություն: 2017-ի հողի հարկի վճարը փոխհատուցելու նպատակով մարզպետարաններին կհատուցվի 104 մլն, իսկ ոռոգման ջրի վարձի փոխհատուցման նպատակով՝ 405 մլն դրամ:

ԿԴՀ 4

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՁՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արտակարգ իրավիճակներից տաշտոանված հաղորդակցություն

Նոյեմբերի 22-ին հանրապետության տարածքում տեղաց առաջին ձյունը: Ինչպես և սպասելի էր, քաղաքացիները չէին անսացել ձմեռային անվադողերով երթևեկելու հորդորներին, ինչը հանգեցրել էր մի շարք պատահարների:

Նոյեմբերի 22-ին Հրազդան-Սևան ավտոճանապարհին վրացական պետհամարանիշներով բեռնատարը սահել և հարվածել էր արգելապատնեշին՝ խոչընդոտելով երթևեկությանը: Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Էդիկ Գալստյանի խոսքով՝ Հրազդանի հրշեջ-փրկարարական ջոկատի «Գազ-66» մեքենան և ճանապարհը սպասարկող ընկերության տեխնիկան մոտ 6 ժամ քարշակել են 40 տ կշռող մեքենան: Ոստիկանությունը վերահսկել է հանդիպակաց գոտով երթևեկող մեքենաների շարժը: *«Բեռնատարն արգելափակվել էր դաշտում նախքան ձյան տեղումները: Շարժիչը հանգել էր, ինչի պատճառով ստիպված եղանք չորս մեքենայով դուրս բերել այն երթևեկելի գոտի»,*- նշեց Հրազդանի «Ճանշիհ»-ի տնօրեն Օնիկ Բաղդասարյանը:

Նույն օրը Սիսիանի փրկարարները ահազանգ էին ստացել Սիսիան-Երևան ավտոճանապարհի 33-րդ կիլոմետրին վթարված մեքենայի մասին, որում հայտնաբերվել էր դի: Ավտոմեքենան դուրս էր եկել ավտոճանապարհի երթևեկելի հատվածից և մոտ 100 մ գլորվել ձորը: Պարզվել էր, որ քաղաքացին Վայքի բնակիչ է, որին որպես անհայտ կորած փնտրում է ոստիկանությունը: Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը վարորդի դին տեղի ուժերով տեղափոխվել էր Սիսիանի բժշկական կենտրոն: Սիսիանի ՀՓՁ հրամանատար, փ/ծ մայոր Գարիկ Հովսեփյանը մտաբերեց, որ երկու տարի առաջ նույն հատվածում Իրանի քաղաքացի էր մահացել: Ճանապարհի եզրերին արգելապատնեշներ չկան, կտրուկ իջվածք է դեպի ձորը. *«Մեքենան գլորվելով հասել էր մինչև Սպանդարյանի ջրամբար, որում ջրի մակարդակն այժմ իջեցված է, հակառակ դեպքում այն կհայտնվեր ջրամբարում: Փորձել ենք կարապիկով դուրս բերել մեքենան, սակայն ապարդյուն: Հարակից գյուղից խնդրել ենք տրակտոր տրամադրել»:*

Հրամանատարը կարևորեց տվյալ տարածքում թեկուզ բարձր հողաթմբերի կառուցումը, ինչը կկանխի հետագա դժբախտ պատահարները: Սյունիքի մարզում նման վտանգավոր ոլորաններ շատ կան:

Մեկ այլ արտակարգ դեպք է գրանցվել Երևան-Երասխ ավտոճանապարհին: Hyundai Elisson մակնիշի մեքենան, որը տեղափոխում էր արտասահմանցի զբոսաշրջիկների, դուրս էր եկել երթևեկելի հատվածից և հայտնվել դաշտում: Վարորդը տեղափոխվել էր Մասիսի բուժկենտրոն, ապա համապատասխան բուժօգնություն ստանալուց հետո դուրս գրվել: Ուղևորները սկզբում տեղափոխվել էին Արտաշատի, ապա՝ Երևանի «Էրեբունի» բուժկենտրոններ: Արարատի ՃԿԿ պետ, փ/ծ փոխգնդապետ Սուրեն Գալստյանը մանրամասնեց, որ Արտաշատի բուժկենտրոնում լեզվի իմացության խնդրի պատճառով հնարավոր չի եղել տուժածներին լիարժեք բուժօգնություն ցուցաբերել, այդ պատճառով նրանք տեղափոխվել են մայրաքաղաք: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան և փակել գազի բալոնի փականը:

Գեղարքունիքի մարզում Սոթք-Քարվաճառ ճանապարհին եղել է մերկասառույց, տեղտեղ գրանցվել են արգելափակումներ: Տեղի «Ճանշիհ»-ն աղալցման աշխատանքներ է կատարել Վարդենյաց լեռնանցքի զառիվեր հատվածներում:

Լոռու ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Կարեն Հովհաննիսյանի հաղորդմամբ՝ մերկասառույցի պատճառով արգելափակման դեպքեր են գրանցվել Ստեփանավանի թունելի երկու կողմերում: Այդ մասին տեղեկացվել է «Ճանշիհ»-ը, կատարվել են ավազալցման աշխատանքներ:

Շիրակի մարզի Մարալիկ համայնքի տարածքում արգելափակվել է բեռնատար: Վարորդը հրաժարվել է օգնությունից, իսկ ուղևորը տեղափոխվել է Անիի ՀՓՁ: Մեքենան երթևեկությունը շարունակել է հաջորդ առավոտյան: Անվադողերի անսարքության պատճառով Անիի ջոկատ են տեղափոխվել ևս երկու քաղաքացի:

Արագածոտնի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Կարապետ Մարգարյանի փոխանցմամբ՝ ձնաբուք է գրանցվել Արագած համայնքի տարածքում, իսկ Ապարանում տեղացել է ձյուն: Փրկարարները օգնություն են ցուցաբերել մերկասառույցի պատճառով երթևեկելի գոտուց դուրս եկած մեքենայի: *«Այս օրերին մեր հիմնական խնդիրը Քարի լճի մոտակայքում տեղակայված «Խաշանոց»-ն է, որի ճանապարհն արդեն 10 օր է՝ ձնապատ է: Քաղաքացիների արգելափակման տասնակ կանչեր ենք ստացել: Օրեր առաջ խորհրդակցություն է կայացել մարզային վարչության և տեղի չորս ճանապարհաշինական ընկերությունների միջև: Ձնաբքի սկսվելուն պես մաքրման աշխատանքներ են սկսվել Ապարան-Արագած և Թալին-Գյումրի ճանապարհահատվածներում»,*- ասաց գնդապետը:

Մերկասառույցի պատճառով շղթայական արգելափակում է գրանցվել նոյեմբերի 23-ի առավոտյան Դիլիջանի թունելից մինչև քաղաքի կենտրոնական շրջանաձև ճանապարհը: Փրկարարները օգնություն են ցուցաբերել 600-ից ավելի մեքենաների, այդ թվում՝ մոտ 50 մեծ բեռնատարի: Տավուշի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Արթուր Հովակիմյանը հավելեց, որ փրկարարները հերթով մոտեցել են բոլոր մեքենաներին, ճշտել՝ արդյոք կա շտապօգնության անհրաժեշտություն: Տեղում կազմակերպվել են աղալցման և բահերով մաքրման աշխատանքներ: Երկկողմանի երթևեկությունը վերականգնվել է ժամեր անց: Խցանման պատճառ էին դարձել ձմեռային անվադողերի բացակայությունն ու քաղաքացիների անհանդուրժողականությունը:

Ուշագրավ է, որ նոյեմբերի 22-ին Ջերմուկում ձյունն ուղեկցվում էր ամպրոպով և կայծակով: Ներկայումս հանրապետության տարածքում փակ և դժվարանցանելի ավտոճանապարհներ չկան: Տեղումները կշարունակվեն նոյեմբերի 23-24-ը:

Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար: ■

Անի ԱՆՏՈՆՅԱՆ

Հանդիպում թուրքագետի հետ

ՃԿՊԱ մշակույթի գծով պրոռեկտոր Կարինե Ոսկանյանի նախաձեռնությամբ՝ ակադեմիայի ուսանողների հետ հանդիպման էր եկել Երևանի պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը: Հայտնի թուրքագետը հիմնական շեշտադրումներով ներկայացրեց, թե ինչ է կատարվում այսօրվա Թուրքիայում, ինչ տրամադրություններ են քաղաքական վերնախավում, որոնց ակունքները թաքնված են 100 տարի առաջ Օսմանյան Թուրքիայում կատարված ցեղասպան գործողությունների խորքում. *«Ցեղասպանությունից հետո Թուրքիայում շարունակեց գերիշխել հայերի նկատմամբ թշնամանքը: Հակահայկականությունն այսօր էլ իշխող տրամադրություն է Թուրքիայում: 1923-ին Թուրքիայի Հանրապետությունը հիմնադրեցին նույն երիտթուրքական կառավարության ղեկավարները, նրանք, գրեթե բոլորը, երիտթուրքական կուսակցության անդամներ էին: Այսօրվա Թուրքիան ստեղծել են Հայոց ցեղասպանությունն իրագործած երիտթուրքերը»:*

Մելքոնյանը նաև ընդգծեց, որ քեմալական շարժումը Եվրոպայից նամակագրությամբ մեծ մասամբ ղեկավարել է Թալեաթը, որի հայերին ոչնչացնելու գաղափարախոսությունը շարունակվեց 20-րդ դարում. *«Այսօր Թուրքիայում գաղափարախոսությունը չի փոխվել: Հայեր գրեթե չկան այնտեղ, հայկական սպառնալիք նույնպես չկա, բայց հայատյաց պետական մտածողությունը շարունակվում է: Պետությունը կառուցված է հակահայկականության հենքի վրա»,*- նշեց թուրքագետը:

Ելույթից հետո Ռուբեն Մելքոնյանը պատասխանեց շոշափված թեման առավել մանրամասնող բազմաթիվ հարցերի:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Լուսանկարը՝ Վահրամ ԱՎՈՅԱՆԻ

ԵՎՍ ԵՐԿՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթի նախորդ համարում տեղեկացրել ենք, որ նոյեմբերի 10-16-ը Գերմանիայի Բոնն քաղաքում անցկացվել է «Կլիմայի փոփոխությունների մասին» շրջանակային կոնվենցիայի տարեկան՝ 23-րդ համաժողովը, որտեղ հերթական անգամ կարևորվել է ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, անցումը կանաչ տեխնոլոգիաների, անտառապահպանման և անտառվերականգնման աշխատանքները և այլն: Այս ամենի արդյունքում կհաջողվի երկիր մոլորակի ջերմաստիճանի բարձրացումը զսպել 1,5-2 աստիճանի սահմաններում: Բոննում որոշվել է ստեղծել «Քաղաքապետերի գլոբալ պակտ», որով քաղաքային իշխանությունը կպարտավորվի ծրագրեր իրականացնել կլիմայի և էներգետիկայի ոլորտներում: 121 երկրի 7400 քաղաք արդեն պատրաստ է միանալ փաստաթղթին: 2017-ի հունիսի 1-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ը դուրս է գալիս 2015-ին Փարիզում կնքված «Կլիմայի փոփոխությունների մասին» համաձայնագրից, ամերիկյան 367 քաղաք պատրաստ է միանալ մշակվելիք փաստաթղթին և կյանքի կոչել փարիզյան համաձայնագիրը:

Բացի սրանից, Բոննում այլ պայմանավորվածություններ էլ են եղել: 20 երկիր, այդ թվում՝ Միացյալ թագավորությունը, Կանադան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, պայմանավորվել են ստեղծել «Ածխի գլոբալ ալյանս», որը պետք է խթանի այսօրվա ածխային էներգետիկայից հրաժարումը և փորձի հասնել նրան, որ ածխով աշխատող արտադրություններ չլինեն:

19 այլ երկիր, այդ թվում՝ Բրազիլիան, Չինաստանը, Եգիպտոսը, Հնդկաստանը, Ֆրանսիան, Մոզամբիկը, պայմանավորվել են բիովառելիքի արդյունավետ օգտագործման ուղղությամբ ջանքեր գործադրել և կհամագործակցեն «Կայուն էներգիա բոլորի համար» նախաձեռնության հետ: Զարգացած երկրները պատրաստակամություն են հայտնել մինչև 2020 թվականը տարերային աղետներից ապահովագրել նվազ զարգացած երկրների առնվազն 400 մլն բնակչի:

Այս նախաձեռնությունները մեկ նպատակ ունեն. վերացնել ջերմոցային գազերի արտանետումներ-գլոբալ տաքացում-կլիմայի փոփոխություն-բնապահպանական արտակարգ իրավիճակներ վնասաբեր շղթան: ■

Հրապարակման պատրաստեց
Արամ ՁԱՔԱՐՅԱՆԸ

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

ԱԻՆ-ը՝ նաև պատմական արժեքների պահապան

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում անցկացվել է հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Հակառակորդի հարձակման դեպքում անձնակազմի և այցելուների պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով: Նախատեսված ժամին «Օդային տագնապի» ազդարարումից հետո իրականացվել են աշխատակիցների և այցելուների, նյութական և մշակութային արժեքների տարհանման աշխատանքներ:

Լրատվամատ
5

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

Սևանի ավազանի պատմական երկրաշարժերը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Ա. Բոբոխյան), համագործակցելով Գերմանիայի Թյուբինգենի համալսարանի արշավախմբի հետ, Սևանի ավազանի հարավարևելյան շրջաններում վերջին տարիներին իրականացնում է միջգիտակարգային հետազոտություններ: Այդ հետազոտություններն ուղեկցվում են պեղումներով, հնագիտական վերգետնյա հետախուզությամբ, մարդաբանական, հնաբուսաբանական և հնաերկրաբանական ուսումնասիրություններով: Պեղումների արդյունքում ի հայտ եկած տվյալների պատմական համատեքստն ամբողջացնելու համար իրականացվում է նաև աղբյուրագիտական ուսումնասիրություն:

Աղբյուրագիտական ուսումնասիրությունների ընթացքում հանդիպեցինք երկու տապանաքարերի, որոնց բովանդակությունը ուշագրավ է Հայաստանի պատմական երկրաշարժագիտության համար: Տապանաքարերը գտնվում են Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի արևմտյան եզրի կամրջի մոտ տարածվող գերեզմանատանը: Տոհմական գերեզմանատունը գտնվում է ավերված վիճակում. պահպանվել են ընդամենը մի քանի խաչքարեր և տապանաքարեր՝ հիմնականում տեղից խախտված վիճակում:

Մեզ հետաքրքրող առաջին տապանաքարն օրորոցաձև է, ունի 6 տող տապանագիր (նկար 1.), որտեղ ասվում է, որ Մռիհոնի եղբայր Մամիկոն սարկավագը մահացել է 1322 թ. երկրաշարժից:

Երկրորդ տապանաքարը գտնվում է նախորդի կողքին, դարձյալ օրորոցաձև և 6 տող տապանագրով (նկար 2.):



Նկ. 1. Մամիկոն սարկավագի տապանագրի գրչանկարը



Նկ. 2. եղբայրական գերեզմանի տապանագրի գրչանկարը

Տապանագրում ասվում է, որ մարդկանց մեղքերից բարկացավ Աստված և 11 հոգի զոհվեցին երկրաշարժից: Սա, փաստորեն, եղբայրական գերեզման է: Թեև թվականը չի նշված, սակայն արձանագրությունը առաջինն ուսումնասիրած վիմագրագետ Ս. Բարխուդարյանը կարծում է, որ նախորդի հետ նույն ժամանակն է:

Այս տապանագրերը հնաերկրաշարժագիտական տեսանկյունից հետազոտել են նաև Վ. Տրիֆոնովը և Ա. Կարախանյանը, որոնք կարծում են, որ հիշատակվող երկրաշարժը համապատասխանում է հայկական մատենագրական սկզբնաղբյուրներից հայտնի 1319 թ. երկրաշարժին, որն ավերածություններ է գործել Շիրակից Սյունիք ընկած գոտում: Այս վարկածը

Նկ. 3. Մի դրվագ Սևանի հարավարևելյան ավազանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունից

թեև հավանական է, բայց ունի թեական կողմեր, մասնավորապես՝ կապված դրանց թվական անհամապատասխանության հետ: Սակայն չի բացառվում, որ հիշատակագրի թվականը վերաբերի ոչ թե երկրաշարժին, այլ շիրմաքարի կանգնեցմանը:

Ամեն պարագայում, չնայած տապանագրերում քննարկվող և մեզ հայտնի 1319 թ. երկրաշարժերի նույնականացման շուրջ գոյություն ունեցող խնդիրներին՝ հիշյալ վիմագրերը չափազանց հետաքրքիր են պատմական երկրաշարժագիտության տեսանկյունից և նոր փաստերի դեպքում կարող են վերարժևորվել: ■

Ավետիս ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն»
ՊՈԱԿ-ի ԲՏԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԸ

Մեր թերթի նախորդ համարում տեղեկացրել ենք, որ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում սկսվել է Հայաստանի հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարների (18 փրկարար) ռուսերեն լեզվի իմացության կատարելագործման և վերապատրաստման եռամյա դասընթաց, որը հնարավորություն կտա հայ փրկարարներին ռուս մասնագետների օգնությամբ կատարելագործել իրենց հմտությունները և վերապատրաստվել առանց լեզվական խոչընդոտների:

ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Արթուր Խաչիկյանից տեղեկացանք, որ լեզվական հմտությունները կատարելագործելուց հետո՝ 2018-ի գարնանը, այս դասընթացի մասնակիցները կմեկնեն Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաք՝ «Ռազմական գործողությունների շրջանում փրկարարական աշխատանքների իրականացում» թեմայով վերապատրաստվելու: ■

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փորձում են պարզել՝ կենդանիները կանխազգո՞ւմ են մոտալուտ երկրաշարժը

Երիտասարդ ղազախ բնագետ, բնագիտության դոկտոր Պավել Մարիկովսկին ստեղծել է նոր գիտաճյուղ, որը կոչվում է սեյսմոբիոլոգիա կամ բիոսեյսմոլոգիա: Նա փորձում է գտնել կենդանիների տարօրինակ վարքի բացատրությունը: Երկրաշարժի նախօրեին կենդանիների տարօրինակ վարքի մասին հայտնի է եղել վաղուց, հատկապես՝ այն ժողովուրդներին, որոնց բնակության տարածքում հաճախ է տեղի ունեցել այդ աղետը:

Ստորև բերված օրինակներն ապացույց են մարդ-բնություն փոխազդեցության:

Երկրաշարժագետներին ցնցել էր այն փաստը, որ 1975-ին 7,3 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի նախօրեին Չինաստանի Հայչենգ քաղաքում ժողովուրդը նախապես պատրաստվել էր: Այդ հարցում նրանց օգնել էին տնային կենդանիների տարօրինակ վարքն ու օձերի մասսայական շարժը, որոնք, ձմեռվա ամիսներին խոր քուն մտնելու փոխարեն, երկրաշարժից քիչ անց դուրս էին եկել բներից:

1948-ի հոկտեմբերի 6-ին Թուրքմենստանի Աշգաբադ քաղաքում տեղի ունեցած 7,3 մագնիտուդ ուժգնությամբ ավերիչ երկրաշարժի նախօրեին քաղաքում լուր տարածվեց, որ մի քանի ժամից երկրաշարժ է լինելու. բներից դուրս էին եկել օձերն ու մողեսները:

Մոտալուտ երկրաշարժն առաջինը զգում են նաև ձկները: Գիտնականների կարծիքով, ձկները վերահաս երկրաշարժը կարող են զգալ ստորերկրյա ջրերում քիմիական բաղադրիչների փոփոխությունից: Հենց դա էլ կարող է կենդանիների տարօրինակ պահվածքի պատճառ դառնալ: Պարզվում է, որ երկրաշարժից առաջ ձկները հավաքվում են վտառով՝ գլուխներն ուղղելով դեպի այն կողմը, որտեղ հարվածի ալիքն է:

Տաքարյուն կենդանիների անհանգստությունն աճում է աղետից 2-3 ժամ առաջ: Նույն ունակությամբ օժտված են նաև թռչունները: Վերջիններիս յուրահատուկ պահվածքը գրավել է նաև անգլիացի բնագետ Չարլզ Դարվինի ուշադրությունը: 1835-ին Հարավային Ամերիկայի ափերին ճամփորդելիս նա նկատել է, թե ինչպես են թռչունները՝ հսկա երամներով, սրընթաց օդ բարձրանում: Եվ դրանից 2 ժամ անց տեղի է ունեցել Չիլիի 8,5 մագնիտուդ ուժով երկրաշարժը:

1792-ին Կամչատկայում անհետացան ծիծեռնակները, և 12 ժամ անց տեղի ունեցավ 8,4 մագնիտուդ ուժով երկրաշարժ:

1988-ի դեկտեմբերի 7-ի Սպիտակի 7,0 մագնիտուդ ուժով երկրաշարժից 20-30 րոպե առաջ առնետները մեծ խմբերով լքել են Լենինականի մսիպահածոների կոմբինատի տարածքը:

Երկրաշարժի նախօրեին կենդանիների պահվածքի նկատմամբ ուշադրությունն ու գիտնականների կողմից արված հետազոտություններն ու փորձերն ի հայտ են բերում նոր բացահայտումներ և փաստեր, փորձում կանխատեսել մոտալուտ երկրաշարժը: ■

Ֆլորա ՄԱՀՏԵՍՅԱՆ
ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն»
ՊՈԱԿ-ի ԲՏԱԿ-ի ուսումնական բաժնի առաջատար մասնագետ

ՆԵՏՎԱԾ ՔԱՐԸ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՊԱՏՃԱՌ

Նոյեմբերի 19-ին Արցախում՝ Հադրութի շրջանի հանդամասերից մեկում, անասուններն արածեցնելու տարած 23-ամյա Հարություն Ավագյանն ականի պայթյունից մարմնի տարբեր հատվածներում բեկորային վնասվածքներ է ստացել: Հադրութի բժշկական կենտրոն տեղափոխված նախրապանի վիճակը բավարար է գնահատվել, նա հիվանդանոցից դուրս է գրվել, ժամանակ առ ժամանակ հիվանդանոցում վիրակապերն է փոխելու գնում: Ինչպես պարզվեց, երիտասարդ նախրապանը Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղի բնակիչ է: Սովորաբար այս համայնքի բնակիչներն անասուններն արածեցնում են Հադրութի հանդամասերում: *«Այդ տարածքներն ամայի են, մեր գյուղի անասուններն այդ կողմերում են պահում: Անասնապահը քարը վերցրել է և շպրտել 30 մ հեռու գտնվող անասունների վրա, որոնք այլ ուղղությամբ էին գնում: Տղան փորձել է փոխել նրանց ուղղությունը՝ ջրի կողմը տանելու նպատակով, սակայն նետված քարն ընկել է հնուց մնացած ականի վրա, որն էլ պայթել է և բեկորներով վնասվածքներ հասցրել նրան: Բարեբախտաբար, վնասվածքները լուրջ չեն»,-* մեզ հետ զրույցում նշեց Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը և հավելեց, որ նման դեպքեր եղել են նաև 1990-ականներին: ■

Մ.Ս.

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Արտակարգ ժամանակներ

Ես վատ հիշողություն ունեմ, բայց երբ սկսում եմ գրել, պատկերները շարվում են ուղեղումս: Դա իսկապես առեղծված է: Չեմ հասկանում ինչու, բայց գրելը կապված է անցյալի հետ: Քո կյանքի դրվագները բառեր դարձնելը իսկապես մի տեսակ հաճույք է: Դա պատճառ է դառնում ապրելու: Ես չգիտեմ՝ ինչու եմ այստեղ և ինչու եմ ապրում, ես ինձ անպետք եմ զգում... Բայց երբ գրում եմ, հասկանում եմ, թե ինչու եմ այստեղ: Ես չգիտեմ՝ արդյոք դա կարևոր է, դա պատճառ է դառնում, որ ապրեմ:

ՖՐԵԴԵՐԻԿ ԲԵԳԲԵԴԵՐ

Շարակ 6

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունում փրկարարական ծառայության սկզբնական սպայական պաշտոններում նշանակելու համար մրցույթի անցկացման մրցութային հանձնաժողով ստեղծելու և մրցույթի անցկացման չափորոշիչներն ու հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N712 հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) փրկարար ծառայությունում (այսուհետ՝ ՓԾ) իրականացվելու է մրցույթ՝ հետևյալ սկզբնական սպայական պաշտոնների համար՝

1) ՀՀ ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության ինքնավար կառավարման համակարգերի բաժնի հրահանգիչ (ինքնավար կառավարման համակարգերի կամ կապի մասնագետ),

2) ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (վարչության) «911» ծառայության հրահանգիչ (911 դիսպետչեր) (մրցույթին մասնակցելու դիմումներ ընդունվելու են միայն ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության ԵԿԱԿ-ում, «911» ծառայությունում, մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններում փրկարարական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներից),

3) ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական ջոկատի խմբի պետ,

4) ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության Ինժեներական ջոկատի հրատեխնիկական «Ա» խմբի պետ (առաջնությունը տրվելու է սակրավորի մասնագիտությամբ կամ սակրավորի վերապատրաստումներ անցած անձանց),

5) ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության N8 հրշեջ-փրկարարական ջոկատի խմբի պետ,

6) ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության Հրազդանի հրշեջ փրկարարական ջոկատի խմբի պետ,

7) ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության Աբովյանի հրշեջ-փրկարարական ջոկատի խմբի պետ,

8) ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Վարդենիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ (մրցույթին մասնակցելու դիմումներ ընդունվելու են միայն փրկարարական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներից),

9) ՀՀ ԱԻՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատի խմբի պետ,

10) ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի խմբի պետ,

11) ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատի խմբի պետ:

2. Մրցույթի մասնակիցները պետք է բավարարեն «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ, 29-րդ և 32-րդ հոդվածների պահանջներին:

3. Դիմումը ՀՀ ԱԻՆ աշխատակազմի քարտուղարություն դիմորդները կարող են ներկայացնել մինչև դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 2017 թվականի դեկտեմբերի 1-ի ժամը 16:00-ն: Փրկարարական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները մրցույթին մասնակցելու համար զեկուցագրերը ներկայացնում են վերադասության կարգով կամ ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հանձնարարականի համաձայն:

4. Դիմորդները դիմումը կամ զեկուցագիրը ներկայացնում են՝ նշելով վերոթվարկյալ պաշտոններից կոնկրետ մեկ պաշտոնը, որի համար ցանկանում են մասնակցել մրցույթին:

5. 2017 թվականի դեկտեմբերի 4-ին և 5-ին, ժամը 10:00-ից անցկացվելու է, ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N55-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված փրկարարական ծառայության ծառայողներին ներկայացվող ֆիզիկական պատրաստվածության պահանջներին համապատասխան, դիմորդների ֆիզիկական պատրաստվածության ստուգարքը:

6. 2017 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 17:00-ին, ՀՀ ԱԻՆ ՓԾ կադրերի վարչության կողմից դիմորդներին կտրամադրվի հարցաշար: Հարցաշարը բաղկացած է լինելու ՀՀ Սահմանադրության, «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԱԻՆ գործունեության ոլորտի ընդհանուր իմացությանը, դիմորդի ընդհանուր զարգացվածությանը (Հայոց պատմություն, ՀՀ վարչատարածքային բաժանում, ՀՀ, հարևան և դաշնակից երկրների կառավարման համակարգ և այլն) վերաբերող հարցերից:

7. Մրցույթը կկայանա 2017 թվականի դեկտեմբերի 8-ին և 9-ին, ժամը 10:00-ից:

*** Հարցերի համար կարող եք դիմել մրցութային հանձնաժողովի քարտուղար, փ/ծ լեյտենանտ Միլենա ԱՅԴԻՆՅԱՆԻՆ՝ աշխատանքային օրերին, ժամը 09:00-18:00-ը, հեռ.՝ 012-31-77-31:**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝
Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) բնակչության պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 21-3.1-56):

Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 21-3.1-61):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման և սահմանված կարգով ներկայացման հաստատման աշխատանքներին, մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների և ծրագրերի մշակման աշխատանքներին: Իրականացնում է մարզի տարածքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքման և վերլուծության աշխատանքները, մասնակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման աշխատանքներին՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 26.01.2018 թ., ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

• նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

• դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը,

• մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,

• անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 08.12.2017 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Նախարարության աշխատակազմին:

(ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 012 31-78-65, 012 31-78-30)

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Դասընթացներ, նաև՝ արտագնա

2017 թվականի համար ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները նախատեսել են 86 դասընթաց (ավելի քան 1800 մարդու մասնակցությամբ), որից 74-ն արդեն անցկացվել է: Միջինը ամեն չորրորդ դասընթացն արտագնա է՝ թե Երևանում, թե մարզերում: Միշտ էլ կազմակերպվում է տարեկան պլանով նախատեսվածից ավելի շատ դասընթաց:

ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 15-17-ը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հետ համատեղ, կազմակերպել էր բազկամարտի համաուսանողական առաջնություն:

Արդեն ավանդույթ դարձած ամենամյա առաջնությունը նվիրված էր ուսանողների միջազգային օրվան: Սիրված մարզաձևի մրցումներին այս տարի մասնակցում էին շուրջ 360 երիտասարդներ Երևանի և Հայաստանի տարբեր մարզերի բուհերից, նրանց թվում նաև ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի սաները: Մարզիկներին և մրցավարներին ողջունեց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը՝ առաջնության եզրափակիչ օրն անձամբ այցելելով մրցադահլիճ:

Մրցաշարին մասնակցող ուսանողներն ընդգրկված էին չորս քաշային կարգերում՝ 70 կգ, 80 կգ, 90 կգ և 90 կգ-ից բարձր քաշ ունեցող մարզիկներ:

Մրցաշարն ընդգրկում էր ձախ ձեռքի մրցման առաջնություն, որին մասնակցում էր մոտ 160 մարզիկ, և աջ ձեռքի մրցման առաջնություն, որին

մասնակցնում էր ավելի քան 200 մարզիկ:

«Այս տարի առաջին անգամ առաջնությանը մասնակցում են նաև շուրջ 20 աղջիկներ, որոնք ընդգրկված են մեկ քաշային կարգում և մրցում են միայն աջ ձեռքով: Ուսանողների միջև հավասար և արդար մրցակցություն ապահովելու նպատակով՝ Հայաստանի բազկամարտի ազգային հավաքականում ընդգրկված պրոֆեսիոնալ մարզիկները չեն մասնակցում մրցաշարին: Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվելու են գավաթներով, մեդալներով, պատվոգրերով և դրամական պարգևներով»,- տեղեկացնում է մրցաշարի համակարգող, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի խորհրդական Հակոբ Հակոբյանը:

Իսկ բուհի ուսանողական խորհրդի նախագահ Ռազմիկ Գրիգորյանը նշեց, որ առաջնությանն ավանդաբար մասնակցում է ԱԻՆ-ի թիմը և ինչպես նախկինում, այնպես էլ այս տարի աչքի ընկավ իր կազմակերպվածությամբ և պատրաստվածությամբ. *«Մեծ ոգևորությամբ են մրցում, և նրանց գործի բնույթն այպիսին է, որ ունեն բարձր ֆիզիկական պատրաստվածություն, այդ իսկ պատճառով ԱԻՆ-ի թիմը մեր բուհի ուսանողների հետ մշտապես առաջատարների շարքում է»:*

«Ակադեմիայից առաջնությանը մասնակցում էին 20 մարզիկ: Մեր թիմում աղջիկներ չունեինք: Մեր սաները ցուցադրեցին իրենց ուժն ու պատրաստվածությունը, տեխնիկական ու որակական տվյալները: Շատ ոգևորված էին»,- տեղեկացնում է ԱԻՆ թիմի ավագ Արամ Մաղսուդյանը:

Ակադեմիայի սաները թեպետ գրանցեցին հաջողություններ, սակայն մրցանակային տեղեր չգրավեցին: ■

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2010 թվականից հրատարակվում է «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, որի ստեղծման օրվանից խմբագրական խորհրդի անդամ էր մեծ հեղինակություն վայելող գիտնական, երկրաբանական գիտությունների դոկտոր, Արկադի Ստեփանի Կարախանյանը:

2017-ի նոյեմբերի 13-ին 66 տարեկան հասակում կյանքից անժամանակ հեռացավ ճանաչված երկրաբան, 2006-2017 թթ. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, 2017-ից նույն ինստիտուտի երկրամոնիթորինգի և երկրահնագիտության լաբորատորիայի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Արկադի Ստեփանի Կարախանյանը: Նրա մահը մեծ կորուստ է երկրաբանական գիտության համար: Նրա բազմամյա ուսումնասիրություններն ակտիվ տեկտոնիկայի, սեյսմատեկտոնիկայի և երկրաբանական տարբեր վտանգավոր երևույթների՝ երկրաշարժերի, սողանքների հետազոտման և դրանց ռիսկի գնահատման ոլորտներում ստացան բարձր հնչեղություն միջազգային երկրաբանական հանրության շրջանում: Արկադի Կարախանյանը հետազոտական աշխատանքներ է իրականացրել Իրանում, Վրաստանում, Կիպրոսում, Սիրիայում, Եգիպտոսում, Ռուսաստանի Դաշնությունում, Դաղստանում և այլուր: Նա համարվում էր ատոմակայանների սեյսմիկ վտանգների գնահատման ԱԷՄԳ (ՄԱԳԱՏԷ) միջազգային փորձագետ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 6 թեկնածուական ատենախոսություն: Հեղինակ է շուրջ 70 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 3 մենագրությունների, որոնք հրատարակվել են ամենահեղինակավոր միջազգային ամսագրերում և հրատարակչություններում:

Մասնակցել և ղեկավարել է INTAS, CRDF, NATO, ISTC, PEER և այլ միջազգային գիտահետազոտական ծրագրեր, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ բազմաթիվ թեմաներ, ինչպես նաև՝ շուրջ 16 գիտաարտադրական նախագծեր:

Արկադի Կարախանյանի՝ ճանաչված գիտնականի, գիտության կազմակերպչի, ազնիվ, համակրելի և կենսուրախ անձնավորության կերպարը միշտ վառ կմնա մեր հիշողության մեջ: ■

ՀՀ ԱԻՆ ԵԿՊԱ
«Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի խմբագրական խորհուրդ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները նոյեմբերի 13-17-ը վերապատրաստման դասընթաց են անցկացրել Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի մարզպետարանների կրթության, մշակույթի և առողջապահության օղակների ներկայացուցիչների համար: Դասընթացին մասնակցել է 19 մարդ: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պատրաստվածության բարձրացման հարցեր» դասընթացի ժամանակ ԵԿՊԱ մասնագետներ Դավիթ Թադևոսյանը, Արայիկ Գասպարյանը, Սիրուշ Հովհաննիսյանը, Գրիգոր Հակոբջանյանը, Աննա Թադևոսյանը, Թերեզա Դիլբարյանը, Վալերի Խոնդկարյանը խոսել են մի շարք թեմաներից. աղետների ռիսկի կառավարման ռազմավարություն, աղետների ռիսկի գնահատում, խոցման ժամանակակից միջոցներ, ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանություն, տարհանման կազմակերպում և այլն:

Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Նաիրա Սարգսյանի խոսքով, հնարավոր վտանգների մասին տեղեկացվածությունը վտանգի դեպքում ճիշտ և ադեկվատ պահվածքի, արագ կողմնորոշվելու, արդյունավետ օգնության հիմք է: *«Տարածքային կառավարման մարմինների տարբեր օղակների աշխատակիցների համար դասընթացները կարևոր են, քանի որ արտակարգ իրավիճակներում բոլորն են ընդգրկվում համապատասխան շտաբի աշխատանքներում: Նրանք պետք է բավարար գիտելիքներ և հմտություններ ունենան: Ցանկալի է, որ դասընթացներում նաև գործնական պարապմունքներ լինեին կամ այցելություն համապատասխան կենտրոններ»,-* մեզ հետ զրույցում ասաց Նարիա Սարգսյանը:

2017 թվականի համար ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները նախատեսել են 86 դասընթաց (ավելի քան 1800 մարդու մասնակցությամբ), որից 74-ն արդեն անցկացվել է: Միջինը ամեն չորրորդ դասընթացն արտագնա է՝ թե Երևանում, թե մարզերում: Միշտ էլ կազմակերպվում է տարեկան պլանով նախատեսվածից ավելի շատ դասընթաց: ■

Ա.Զ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ նոյեմբերի 23-ին և 24-ին Մոսկվայում կանցկացվի քաղաքացիական պաշտպանության ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների երկրորդ միջազգային սեմինարը, որին կմասնակցի նաև ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի դեկան Դավիթ Թադևոսյանը:

Երկու օրում կներկայացվի ավելի քան 10 զեկույց. «Բազմատարբերակ ծրագրեր բնակչության և տարածքների պաշտպանության և արտակարգ իրավիճակների ոլորտում», «Բնակչության պաշտպանության ոլորտի շարժունակ

խմբերի համար դասընթացավարներին ներկայացվող ընդհանուր պահանջներ», «Բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտի շարժունակ խմբերի նյութատեխնիկական ապահովման հարցեր», «Լեռնափրկարարների պատրաստման միասնական չափանիշներ», «Կադրերի վերապատրաստման միասնական չափանիշներ» և այլն:

Միջազգային սեմինարի մասին առավել մանրամասն՝ մեր թերթի հաջորդ համարում: ■

Ա.Զ.

911 Արտակարգ թերթ
N 44 (692)
24-30 նոյեմբերի, 2017

Նոր կրթահամալիր

Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Դիլիջանում բացվել է ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Բացման արարողությունը նվիրվել է ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան հոբելյանին. նոյեմբերի 25-ին լրանում է հերոսի ծննդյան 60-րդ տարեդարձը:

Մոնթե
8

Օգնում են փրկարարները

Գիշերն անցկացրել են ՀՓՁ-ում

Անցած յոթ օրում ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 300 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է 40 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 100 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու, բնակարան բարձրացնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Էրեբունի, Նոր Նորք, Արաբկիր, Ավան, Աջափնյակ, Կենտրոն վարչական շրջանների և Լոռու ու Շիրակի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, տանիք, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: Տարբեր տարածքներում արգելափակված մի շարք մեքենաներ են դուրս բերվել երթևեկելի հատված:

Այլ կանչեր. Կենտրոն վարչական շրջանի փրկարարներն ահազանգ են ստացել, թե քաղաքացին Հրանտ Շահինյան փողոցում ծխատարը մաքրելու համար բարձրացել է տանիք և չի կարողանում իջնել: Հրշեջ-փրկարարները 38-ամյա տղամարդուն անվնաս իջեցրել են տանիքից: Նույն վարչական շրջանում ահազանգ է ստացվել, թե Հրազդանի կիրճում աղվեսի ձագն ընկել է ջրանցքը: Հրշեջ-փրկարարներն աղվեսին դուրս են բերել ջրանցքից և տեղափոխել անվտանգ տարածք:

Կոտայքի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Նոր Գեղի գյուղում շղթան փաթաթվել է շան վզին, շղթան կտրելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները շանը ազատել են կապանքներից:

Լոռու փրկարարներն ահազանգ են ստացել, թե Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհի մի հատվածում կովն առջևի ոտքերով ընկել է հորը և արգելափակվել: Հրշեջ-փրկարարները հորից դուրս են բերել կովին և հանձնել տիրոջը: Նույն մարզում ահազանգ է ստացվել, թե Սպիտակ քաղաքի Սուրեն Ավետիսյան փողոցի տներից մեկի մոտակայքում մի ծառ ենթակա է էտման, անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները ցուցաբերել են համապատասխան օգնություն:

Շիրակի փրկարարները Լանջիկ-Մարալիկ ավտոճանապարհին մերկասառույցի պատճառով արգելափակված մեկ բեռնատար և մեկ մարդատար մեքենաների վարորդներին և ուղևորներին (4 հոգի) տեղափոխել են թիվ 51 հրշեջ-փրկարարական ջոկատ՝ գիշերելու: ■

ՀԱՁՈՂԱԿ ԼԵՌՆԱԳՆԱՑԸ

Ավստրիացի փրկարարները հայտնաբերել են գերմանացի լեռնագնացին, որը հինգ օր շարունակ անցկացրել է Ալպյան լեռների մոտ 30 մ խորության սառցե ճեղքվածքում:

The Local անգլալեզու լրատվական կայքի փոխանցմամբ՝ Դուսյբուրգի 45-ամյա բնակիչը նոյեմբերի 4-ին ճամփորդության էր դուրս եկել Դախշտայն լեռան լանջերով, սակայն շուտով դադարել էր հաղորդագրություն ուղարկել հարազատներին:

Ոստիկանության որոնումներն արդյունք չէին տվել: Միայն չորս օր անց տեղական փրկարար ծառայության հեռախոսահամարին գրանցվել էին կարճ զանգեր, որոնք օգնել էին որոնողական աշխատանքները շարունակել կոնկրետ վայրում: Հաջողվել էր կապ հաստատել լեռնագնացի հետ, վերջինս հաղորդել էր իր կոորդինատները:

Պարզվել էր, որ մոտ 2000 մ բարձրության վրա ձնահյուսի պատճառով լեռնագնացը չի նկատել ճեղքվածքը, ընկել է և վնասել ուսն ու արմունկը: Բարեբախտաբար պայուսակում գտնվել էին հեռախոսի հավելյալ մարտկոցներ, որոնք էլ փրկեցին նրա կյանքը: Տուժածն ուղղաթիռով տեղափոխվել էր հիվանդանոց՝ կոտրվածքներով և գերսառած վիճակում: Արկածախնդիր լեռնագնացն այժմ ապաքինվում է: ■

Պատրաստեց՝ **Անի ԱՆՏՈՆՅԱՆ**

ԵՎ ՁՅՈՒՆԸ ԵԿԱՎ

Նոյեմբերի 24-ի գիշերը շրջանների զգալի մասում, ցերեկը Վայոց ձորում, Սյունիքում և Արցախում, 25-ին Լոռիում, Տավուշում, Սյունիքում և Արցախում սպասվում են տեղումներ, լեռնային և նախալեռնային գոտիներում՝ ձյան, հովտային գոտում՝ ձնախառն անձրևի տեսքով: 26-28-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը 26-ի գիշերը կնվազի 4-6 աստիճանով: Նոյեմբերի 24-ի գիշերը Երևանում ժամանակ առ ժամանակ սպասվում են տեղումներ, բարձրադիր հատվածներում՝ թաց ձյան, ցածրադիր հատվածներում՝ ձնախառն անձրևի տեսքով, 24-ի ցերեկը, 25-ին սպասվում է փոփոխական ամպամածություն, հնարավոր են տեղումներ: 26-28-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: ■

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Այրվածքներ. քիմիական այրվածք

Քիմիական այրվածքները սովորաբար առաջանում են ուժեղ թթուներից կամ հիմքերից: Այս նյութերը կարող են արագ քայքայել մաշկը: Քիմիական այրվածքները կարող են առաջանալ քիմիական նյութի հետ շփումից անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց:

Քիմիական նյութի ազդեցությունը տևում է այնքան ժամանակ, քանի դեռ այն գտնվում է մաշկի վրա: Ուստի պետք է շտապ հեռացնել այն մաշկի վրայից՝ լվանալով հոսող ջրի տակ: Որոշ նյութեր, օրինակ, չհանգած կիրը, որոշ թթուներ, ջրի հետ փոխազդելով, ջերմություն են արտադրում, այդ պատճառով, մինչև ջրով լվանալը, աշխատեք հնարավորինս արագ հեռացնել քիմիական նյութը չոր գործվածքով կամ փափուկ խոզանակով: Զգույշ եղեք, քանի որ քիմիական նյութը կարող է դիպչել ձեր մաշկին:

Եթե քիմիական նյութը վնասել է աչքը, ապա առնվազն 15 րոպե լվացեք այն հոսող ջրի տակ: Վնասված աչքը պահեք առողջ աչքի մակարդակից ցածր՝ աղտոտումից պաշտպանելով առողջ աչքը): Աշխատեք, որ ջուրը մուտք գործի կոպերի տակ: Մի՛ տրորեք աչքը:

Այրվածքով տուժածին առաջին օգնություն ցուցաբերելիս՝ առաջին հերթին ապահովեք սեփական անվտանգությունը և կատարեք հետևյալ գործողությունները.

- Դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:
- Սառեցրեք այրված մակերեսը:
- Նվազեցրեք վարակի ներթափանցումը:
- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելող քայլեր:
- Ահազանգեք շտապօգնություն, վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և դրանք փոխանցեք դեպքի վայր հասած արագ արձագանքման ծառայությունների ներկայացուցիչներին: ■

Բաժանորդագրություն **2018**

ՄԵՐ ԹԵՐԹԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ՝

ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

ՀՎՀՀ 02500731

Աճառյան 1, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510002970030100

Տարեկան բաժանորդագրության գումարը՝ 6720 դրամ:

Այլ մանրամասների համար զանգահարել՝ (060) 69 10 00 (ներքին՝ 207)

911 Արտակարգ թերթ
ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**
Գրանցման վկայական՝
03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ԵՂՅԱՆ
Համարի պատասխանատու՝
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՁ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 23.11.2017, ժամը՝ 17:00:
Տպաքանակ՝ 3379: Պատվեր՝ 44
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 691 000 (502, 503)
Գինը՝ 140 դրամ:

©
Գլխագիրը՝ **Արտակ Բաղդասարյանի**
Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝ **Մկրտիչ Մաթևոսյանի**